

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ ԿԿՆՔԻ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՒՄԻ ՀԵՏ**

19.02.2015 15:39



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը այսօր՝ փետրվարի 19-ին ընդունել է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Փորձաքննությունների ազգային բյուրո՝ ՊՈԱԿ-ի տնօրեն Արտաշես Ջավադյանին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են երկու կառույցների միջև փոխըմբռնման և համագործակցության հուշագրի կնքման հնարավորությունը: Թե՛ փաստաբանների պալատի և թե՛ Փորձաքննությունների ազգային բյուրոյի՝ ներկայացուցիչները հույս են հայտնել՝ համատեղ ջանքերով իրականացնել այնպիսի ծրագրեր, որոնք հնարավորություն կտան փաստաբաններին և բյուրոյին որակապես նոր մակարդակի վրա բարձրացնել քաղաքացու պաշտպանությունը դատական ատյաններում, ինչպես նաև նեղ մասնագիտական փորձաքննությունների մասին կիրառել են փաստաբաններին:

Միաժամանակ Փորձաքննությունների ազգային բյուրոն՝ ՀՀ փաստաբանների պալատին կներկայացնի այն բոլոր փորձաքննությունների տեսակները (ենթատեսակները), որոնցով փաստաբանները կարող են ինքնուրույն դիմել և փորձաքննություն պատվիրել:

Հանդիպմանը ներկա Փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանի հետ էլ քննարկվել են Փաստաբանական դպրոցում Ազգային Բյուրոյի բարձրակարգ մասնագետների դասախոսություններ կարգալու հնարավորությունը: Կողմերը պայմանավորվել են ակտիվ աշխատել այդ ուղղությամբ և կարճ ժամանակում համագործակցության առաջին քայլերը կատարել:

Որպես նախնական փուլ Փաստաբանական դպրոցի ունկնդիրների համար շրջայց կկազմակերպվի Փորձաքննությունների ազգային բյուրոյում, որպեսզի ծանոթանան վերջինիս հնարավորություններին:

Հանդիպման ավարտին Արտաշես Ջավադյանը շրջայց է կատարել Պալատում՝ եղել է Փաստաբանական դպրոցում և Հանրային պաշտպանի գրասենյակում:





Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })